III

# 31 ՀՈՌՈՄ-ՀՈՌՈՄ
## ОРОМ-ОРОМ






*Հոռոմ-հոռոմ հոռոմել ա յարըս,*
*Արև տունը՝ թոռոմել ա յարըս։*
Ա՛ղջի Հոռոմ, բաղդադին կապել ես,
Նըշանվել ես, յարոյիդ խաբել ես։

*Հոռոմ-հոռոմ հոռոմել ա յարըս,*
*Վարդը ձեռին՝ թոռոմել ա յարըս։*
Ա՛ղջի Հոռոմ, մինթանեն հագել ես,
Պըսակվել ես, յարոյիդ խաբել ես։

*Հոռոմ-հոռոմ հոռոմել ա յարըս,*
*Ինձ չի տեսել՝ թոռոմել ա յարըս։*
Ա՛ղջի Հոռոմ, մատանին դըրել ես,
Նըշանվել ես, յարոյիդ խաբել ես։

*Հոռոմ-հոռոմ հոռոմել ա յարըս,*
*Վարդի տակին՝ թոռոմել ա յարըս։*
Ա՛ղջի Հոռոմ, ոսկիքը գըցել ես,
Պըսակվել ես, յարոյիդ խաբել ես։